

ՄԱԹԵՆԻԿ ԶԱՂԵԹՅԱՆԻ ԸՈՒՇԵՐԸ ՄԻԱՄԱՆԹՈՅԻ ՄԱՍԻՆ

1904 թվականի ծնունդը Ատոմ Յարճանյանը (Սիամանթո) մեկնում է Հվեյցա-րիա՝ Լեյզեն, հյուժախտից բուժվելու նպատակով։ Հվեյցառիայում ուսանող հայորդիներն ու հայուհիները սիրով եւ քերմությամբ են շրջապատում սիրելի բանաստեղծին։ Այդ ուսանողուհիներից մեկի՝ Սաթենիկ Ջաղեթյանի եւ Սիամանթոյի միջեւ ներքին համակրանքի եւ լռելյայն սիրո հարաբերություն է հաստատվում, որը շարունակվում է մի քանի տարի, մինչեւ Սաթենիկի Թիֆլիս վերադառնալը։ Սաթենիկ Ջաղեթյանը (Սարգսյան) այդ հանդիպումներից շուրջ 60 տարի անց՝ 1965 թ., Գրականության եւ արվեստի բանգարանին հանձնեց իր հուշերը Սիամանթոյի մասին, ուր բազում շահեկան մանրամասներ կան մեծ բանաստեղծի կյանքի այդ շրջանի մասին։ Հուշերի ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Սիամանթոյի ֆոնդ, 204։

Հանդիպել եմ Սիամանթոյին 61 տարի առաջ, 1904 թ., Լոզանում։

Գարնան սկիզբն էր։ Ինձ լուր տվին ուսանողները, որ բանաստեղծ Սիամանթոն բուժման է գնում Լեյզեն, անցնելու է Լոզանով եւ գնում ենք դիմավորելու նրան։ Ուսանողներից շատերը Սիամանթոյին ճանաչում էին ժնեւից, իսկ ես առաջին անգամ պետք է հանդիպեի նրան։ Գնացի՞նք, դիմավորեցի՞նք եւ բոլորս հավաքվեցի՞նք մի ընկերուհու մոտ, որը հիվանդության պատճառով չէր կարողացել գալ կայարան։

Շնտ զգացված էր Սիամանթոն։ Նա մեզ դիմավորեց ժպտուն դեմքով, գոհ եւ մեծ հաճույքով ու սիրով։

Սիամանթոն բարձրահասակ, հաճելի դեմքով, չափազանց նիհար ու գունատ, հմայիչ ծայրով, բայց եւ թախծոտ երիտասարդ էր։

Ես էի միակ անծանոթը նրա համար։ Առաջին անգամ տեսնելով ինձ՝ նա ասել էր. «Հայ աղջիկներու մեջ ասա՞նկն ալ կըլլա»։ Այդ ես իմացա նրանից, հետագայում։ Ես բոլորովին երիտասարդ (ուսանողությանս առաջին տարին էր), բավական ամաչկոտ, քչախոս էի։ Բոլորը աշխատում էին ուրախ մթնոլորտ ստեղծել հիվանդ, շատ հիվանդ, սիրված բանաստեղծի շուրջը, իսկ ես թեյի պատրաստություն էի տեսնում՝ հյուրասիրելու մեր հոգնած հյուրին։

Երբ արդեն ժամանակն էր ճանապարհվելու Լոզան, բոլորս խմբված դիմեցինք դեպի կայարան։

Առաջին ամիսներին Լեյզենում Սիամանթոն չափազանց ծանր վիճակում է եղել։ Հուսահատ, լքված, բայց կամքի մեծ ուժով դիմադրելիս է եղել սոսկալի հիվանդությանը, շարունակ կրկնելով «Պիտի՛ ապրի՞մ, պիտի՛ ապաքինվե՞մ, պիտի՛ ապրի՞մ, ապրի՞մ...»

Սանատորիայում նա օրինակ է ծառայելիս եղել մյուս հիվանդների համար։ Ժփշկները հիացած են եղել նրանով։

Եվ այդպես երկու տարի շարունակ խիստ ռեժիմ պահպանելով, Սիամանթոն կարողանում է զգալի ապաքինվել:

Մենք՝ ուսանողներս, անուշադիր չէինք դեպի մեր հիվանդ, տառապող բանաստեղծը: Սիամանթոնին Լեյզեն ճանապարհելուց 10-15 օր հետո մեր հայկական գատիկն էր: Մտածեցինք բանաստեղծի տրամադրությունը բարձրացնել մեր ուշադրությամբ:

Ուղարկեցինք Լեյզեն մի ծանրոց, որի մեջ դրել էինք շոկոլադի մի մեծ հավ շրջապատված իր ճուտիկներով, լցրինք արկղը տեսակ-տեսակ ընտիր զվիցարական շոկոլադներով. դա ամենաուժեղ սնունդը կարող էր լինել հիվանդի համար:

Սիամանթոն շատ զգացված, բացիկներ էր գրել բոլորին եւ խնդրել հանձնել ինձ իմ՝ բացիկը՝ հասցեագրված «օրիորդ Շաղիթյանին»: Ինձ թվաց, որ նա սխալվել էր ազգանունն ճիշտ չիմանալու պատճառով: Հետագայում նա պարզեց, որ իր ցանկությունն է եղել այդպես փոխելու եւ միշտ Սիամանթոն ինձ անվանում էր «օրիորդ Շաղիթյան»:

Մի քանի ամիս անց Սիամանթոն մի քիչ ույծ հավաքած՝ իջել էր Լեյզենից Լոզան: Նորից շրջապատված ուսանողներով՝ հաճելի ժամանց ունեցանք: Սիամանթոն հետաքրքիր գրուցակից էր եւ մեծ հումորով:

Եվ այդպես նա սկսեց ժամանակ առ ժամանակ այցելել Լոզան:

Հետագայում միմիայն ինձ համար պարզ եղավ, որ Սիամանթոն գալիս է եղել Լոզան ինձ հանդիպելու նպատակով եւ իր պատմելով, դա բարերար ազդեցություն է ունեցած նրա տրամադրության եւ առողջության վրա:

Մի այդպիսի այցելման ժամանակ Սիամանթոն սկսեց բացիկ գրել եւ ըստ այնտեղի սովորության, տվեց ներկա եղողներին ստորագրել բացիկի տակ:

Հերթը երբ հասավ ինձ, ստորագրեցի եւ հարցրի, թե ո՞ւմ է հասցեագրված բացիկը: Իմանալով որ բանաստեղծ Արամ Չարըզին է ուղղված բացիկը, ասացի՝ «Ես նրան ճանաչում եմ Կովկասից»: Ինչպես հետո պարզվեց, Սիամանթոն այդ մասին ավելացրել էր բացիկում: Դրա հետեւանքը այն եղավ, որ Չարըզը, բացիկը ստանալուն պես, Բուլղարիայից շտապել էր ժնել:

Թե ինչո՞ւ, հետո պարզվեց:

1904 թ. ամռանը ես վերադարձա Կովկաս՝ Թիֆլիս, ծնողներիս մոտ:

Աշնանը 1904 թ. վերադարձա նորեն Լոզան ընկերուհուս՝ տիկին Ջավենի հետ, որը մտադիր էր ուսումնասիրել ֆրանսերեն լեզուն:

Մեր հասած օրը գնացինք օր. Սարումյանի մոտ, որը երկար տարիներ ուսանում, ապրում էր մոր հետ միասին:

Սարումյանը մեր ավագագույն ընկերը լինելով, սիրով եւ հարգանքով էին հավաքվում նրա մոտ ուսանողները: Սարումյանի մոտ մենք հանդիպեցինք Սիամանթոնին, որը շատ ուրախացած, ծանոթանալով իր մոտ ընկերոջ՝ Տիգրան Ջավենի կնոջ հետ, ինչպես պարզվեց, նա գտավ հենցնրան ինձ հետ մոտենալու:

Սիամանթոն կապ էր պահպանում տիկին Ջավենի հետ. նամակներ էր գրում Վրվե (Լոզանին մոտ քաղաք), ուր տեղափոխվել էր տիկինը, հայերից մի քիչ հեռու լինելու, լեզվի մեջ խորանալու համար:

Մի նամակում, 1905 թ. 25 IV՝ ուղղված տիկին Ջավենին, Սիամանթոն հարց-

նուն է, թե ե՞րբ է տիկինը Լոզան տեղափոխվելու եւ, ի միջի այլոց, գրում է «օրիորդը մարմարակերպ արծառի մը լուրջութիւն կ'ապհե, ավելի աղեկ...»:

Մի ուրիշ նամակում (1905 թ. 5 V) տիկ. Ջավենը գրում է ինձ Վրվիից «Բախտավոր եակ. շարունակ գարնան, վարդի, տխակի պոչեր բռնած նամակներ ես ստանում... Եարճանից ես ալ ստացա նամակ. շատ էր ստիպում, որ հերոսական որոշում մը ընեմ ժընեւ կամ Լոզան տեղափոխվեմ: Երեւի ուրիշի կարոտը ինձ-նից է ուզում առնել...»:

Չետո էլ գրում է նա, որ Լոզան չի ուզում գալ, եւ այդ չուզելուն պատճառները ոչ ոք կարող է նույնիսկ կասկածել: Ես ալ գրեցի, որ ես կասկածում եմ: Եարճանից էլի նամակ ստացա, գրում է տիկ. Ջավենը. «գթութիւն է աղաղակում, որովհետեւ իր ընկերոջ այն չսիրած կինը Եգիպտոսից ժնեւ է եկել: Ինքը ուզում է ժնեւից հեռանալ, խորհուրդ է հարցնում»:

Տեսնելով, որ իմ լուրջութիւնը վատ կարող է ազդել Սիամանթոյի առողջական դրության վրա, ես նրա ինձ գրված բացիկին պատասխանում եմ, եւ նա անմիջապէս 1905 թ. 4 XI ինձ ուղղում է մի բացիկ՝ «Օրիորդ Եւաղիայան, ի՞նչպէս ժամանակ կրնաք գտնել այդչափ բարի ըլլալու համար...»:

Ես զգացի, որ պետք է ավելի ուշադիր լինեմ եւ ժամանակ գտնեմ միշտ պատասխանելու նրա գրած բացիկներին:

Մի կիրակի օր ինձ մոտ են մտնում մի քանի ընկերներ ժնեւից, Անդրանիկի (մեր ժողովրդական հերոս) եւ Սիամանթոյի հետ միասին:

«Սիամանթոյին Ամերիկա ենք ճամփում. եկել է մնաս բարեւի»,— ասում է Անդրանիկը: «Եթե ունես եւ կարող ես, Սաթենիկ, մի փոքր բարձր տուր նրան»,— շարունակում է Անդրանիկը: Ես տվեցի բարձր, հրաժեշտի խոսքեր մաղթեցինք միմյանց, եւ ընկերները գնացին կայարան Սիամանթոյին ճանապարհելու: Չետո իմացա, որ Սիամանթոն հրաժարվել է բարձրանալ գնացքը ասելով՝ «Ես չեմ կրնայ գնալ»: Վերադարձել են ժնեւ նորեն (1904-05 թթ.): Այդ ժամանակները Սիամանթոն տեղափոխվել էր Լոզանից մի քիչ բարձր, մի սանատորիա՝ շրջապատված անտառով: Մի կիրակի օր նա մեզ հրավիրեց: Ֆինիկուլորով բարձրացանք մի սքանչելի գեղատեսիլ վայր՝ ծածկված զարնանային ծաղիկներով: Փնջեր կանգնած, երբ-ուրում էինք վերադառնալ, Սիամանթոն ցույց տվեց սանատորիայի շենքը, իր սենյակի պատուհանը՝ ամբողջովին ծածկված սպիտակ շուշաններով: Մանկական ժպիտը դեմքին նա մեզ դիմեց. «Դուք շատ եք ծաղկներ սիրում, հիացե՛ք. ձեզ արժանի են այս սպիտակ շուշանները միայն...»:

Սիամանթոն ինքը շատ ծաղկասեր էր, նուրբ ճաշակի, քնքույզ զգացմունքների տեր:

Խիստ տարված էր գեղարվեստով. պաշտում էր պոետ Վերհարնին, նկարիչ Յիններին, քանդակագործ Ռոդենին եւ շատ-շատերին: Չագնվում էր ճաշակով, չափազանց մաքուր: Ես նրա վրա երկու տարի շարունակ, տեսել եմ միեւնույն կոստյումը, բայց այնպէս պահված, կարծես նոր էր դուրս եկել դերձակի մոտից:

Ինձ մի անգամ հանդիպել էր իր մի ռուս ծանոթի հետ փողոցով անցնելիս, որին խոստացել էր ինձ հետ ծանոթացնի, եթե հանդիպի: Չնայած հեռվից ինձ նկատել էր, բայց խոսք էր տվել ինձ մոտենալ, որովհետեւ շրջագնեստ չի հա-

մապատասխանել իր ճաշակին (աշխատանքիս զգեստս էր):

Սիամանթոն անհարձար է համարել ռուս ժանրոփն ներկայացնել իր այնքան գոված, հիացած, միշտ նուրբ ճաշակով հագնված հայ ընկերուհուն: Ինձ հետ հանդիպման ժամերին Սիամանթոն երբեք չի ցուցաբերել առանձին, նկատելի ուշադրություն, այնպես որ ես չէի կարող ենթադրել, զգալ, թե ինչ է կատարվում նրա մեջ, ինչ ապրումներ, զգացմունքներ ուներ նա դեպի ինձ: Նրա հոգեկան աշխարհը ինձ անծանոթ էր խիստ ծածկամիտ լինելու պատճառով: Ի՞նչն էր պատճառը նրա ծածկամտության, չհասկացա:

Սիամանթոն տիկ. Ջավենին գրում է՝ «Լոզան չեմ ուզում գալ եւ այդ չուզելուն պատճառները ոչ ոք կարող է նույնիսկ կասկածել»:

1905 թ. գարնանը Բեռն քաղաքում կոնֆերանսի էին հավաքվել հայ ուսանողների դեղեգատները զանազան քաղաքներից: Ես էլ դեղեգատ էի Լոզանից: Ինձ հետ էր եւ տիկ. Ջավենը, ինչպես հյուր:

Կոնֆերանսի 2-րդ օրը անսպասելի Լեյզենից եկավ Սիամանթոն: Ներկաները ուրախ հանդիպեցին նրան: Տիկին Ջավենը եւ ես տպավորություն ստացանք, որ Սիամանթոն եկել էր ավելի շատ մեզ հանդիպելու, որովհետեւ նա աշխատում էր մեզ ընկերներից հեռու պահել: Ճաշում էինք իրեն հետ առանձին, ազատ ժամանակները աշխատում էր լինել միմիայն մեզ հետ, ճանապարհվեցինք Բեռնից ուրիշ գնացքով, որպեսզի նորեն լինենք միմիայն իրեն հետ: Այս ինձ շատ տարօրինակ թվաց, անհարձար եւ անդուր անգամ: Բայց դա էլ իր պատճառները ուներ երեւի: Սիամանթոն ցույց չէր տալիս, բայց երեւի խնդրում էր:

Եկավ 1905 թ. ամռանը: Ընկերուհիս վերադարձավ Թիֆլիս՝ ամուսնու մոտ: Ես պետք է քննությունների պատրաստվեի, եւ որոշել էինք օր. Սարումյանի հետ միասին գնալ զվիցարական Բալեզ գյուղը՝ հանգիստ պարապելու նպատակով: Մեզ միացավ, Սիարումյանի (գրող) խնդրանքը, նրա ընտանիքը, որ եկել էր Կովկասից եւ օր. Սարումյանի ընկերուհին, որը հետագայում դարձավ Սիարումյանի կինը: Ես հրաժարվեցի ապրել այդպիսի աղմկալից ընտանիքում եւ սենյակ վերցրի 2-3 տուն նրանցից հեռու: Այդ ամառը, լսելով որ ժնե է եկել հայտնի դերասանուհի Էլեանորա Դուզեն, Սարումյանը եւ ես որոշեցինք անպայման գնալ ժնե նրան տեսնելու: Դենց ժնե հասած օրը փողոցում հանդիպեցինք բանաստեղծ Սրամ Չարըզին, որի հետ Սարումյանը ծանոթ էր դեռեւս առաջները ժնեից: Օր. Սարումյանը ուզեց մեզ ծանոթացնել. Չարըզը շտապեց ասելու, որ նա ինձ ճանաչում է դեռ աշակերտուհի ժամանակից: Ես չգիտեմ՝ ինչու չէի համակրում Չարըզին, որին հանդիպել էի Դիլիջանի մոտակա «Նիկիտինո» մալականի գյուղում, ամառանոցում եղած ժամանակ: Չարըզը ինձ դիմեց. «Օրիորդ, ստացե՛լ եք արդյոք իմ նամակը, որը ուղարկել եմ Յարճանյանի տված ձեռ գյուղի հասցեով: Յարճանյանին ես այստեղ հանդիպեցի. մի քանի օր առաջ ես ուղեկցեց Արիստակես եպիսկոպոսին Փարիզ»:

Ես Չարըզի նամակը չէի ստացել. շատ դժգոհ էի նրան հանդիպելուց: Նա օր. Սարումյանին տվել էր ինձ հանձնելու համար մի տետր՝ իր ուսանավորներով, նվիրված ինձ «Նիկիտինի եղնիկին» վերնագրով: Ես առանց կարդալու, զայրացած, տետրը վերադարձրի Սարումյանին, որ հանձնի Չարըզին, եւ Դուզեի գաստրոլները վերջանալուն պես վերադարձանք գյուղ: Պետք է ասեմ՝ ժնե ե-

դած ժամանակ Չարըզը մեզ հանգիստ չէր թողնում: Միշտ ուղեկցում էր թատրոն, ճաշարան, ամեն անգամ վճարում էր ինքը: Իմ բողոքներին նա պատասխանում էր՝ «հետո, միանգամից կվճարեք» եւ վերջն էլ հրաժարվեց վերցնելուց: Որոշեցի գյուղից փոխադրվել նրան դրամը:

Վերադարձանք Բալեզ:

Այստեղ գտա ինձ հասցեագրված մի նամակ Չարըզից, որ գրում էր. «Ատոմի (Յարճանյանի) ինձ Բուլղարիա դրկած քարտից իմացա անսպասելի Չեր ուր լինելը եւ շտապ վերադարձա ժնեւ Չեզ հետ հանդիպելու: Հանդիպեցա Յարճանյանին, հարցուփորձ քրի Չեր մասին, սիրտս բացի, նկարագրեցի տածածս զգացմունքները հանդեպ Չեզ: Յարճանյանը հուզված լսում էր եւ ավելի հուզված պատասխանեց. «Ես երկու տարի է տառապում եմ: Ես չեմ համարձակվել օրիորդին հայտնել իմ զգացմունքներս: Ես աշխատել եմ ապաքինվել, ույժ հավաքել սիրտս բացելու նրա առաջ: Նրա շնորհիվ է, որ ապրում եմ: Ես ոչ ոքի չեմ զիջել իմ սերս»: Լսելով Ատոմի խոստովանանքը՝ ես ասացի. «Իմ սերս ես զիջում եմ մեր մեծ բանաստեղծին: Ես կգրեմ օրիորդին այդ մասին, քանի որ դու այդքան համեստ, մեղմ, փափկանկատ եւ քաշվող ես»:

Նամակը կարդալով՝ ես անչափ հուզվեցի, վիրավորվեցի: Իրավունք ունեի*, թե՞ ոչ: Փոքր երեխայի պես լացելով վազեցի օր. Սարումյանին ցույց տալու նամակը՝ դժգոհելով. «Ինչո՞ւ ինձ հանգիստ չեմ թողնում. ես եկել եմ սովորելու եւ ոչ ոքի տեսնել չեմ ուզում»:

Օր. Սարումյանը ինձ հանգստացնելու փոխարեն ծիծաղում էր՝ ասելով. «Երեխա ես, երեխա. ուրիշները կհպարտաբան այդպիսի հաջողություն ունենալով, իսկ դու զայրանում եւ փախչում ես թուրքից»:

Խիստ հուզված եւ զայրացած ես անմիջապես դրամ փոխադրեցի Չարըզին, որ ծախսել էր ժնեւում, առանց տող գրելու:

Մենք դեռ ամառանոցում էինք, երբ Սիամանթոն վերադառնալով Փարիզից ժնեւ, իմանալով Չարըզի նամակի մասին, սիրտ է անում գալ գյուղ: Բուլոսը ջերմ ընդունելություն ենք ցուցաբերում եւ աշխատում հանգիստ մթնոլորտ ստեղծել այդքան տանջված, երազկոտ, ծայրաստիճան նուրբ ու զգայուն, համեստ եւ ինքնամփոփ, մի փոքր էլ տարօրինակ բանաստեղծի շուրջը:

Երջանիկ էր Սիամանթոն: Նրան թվում էր, որ հասել է իր նպատակին: «Մարդու ամենամեծ երջանկությունը՝ տեսնել գեղեցիկը, վայելել գեղեցկությունը. թող այս աստղերը լինեն վկա իմ մեծ սիրույն...»,— կրկնում էր նա շարունակ: Ինչքան երազկոտ էր Սիամանթոն:

Վերադարձանք Լոզան, ուր Սիամանթոն մնաց կարճ ժամանակ: Գնաց ժնեւ, որպեսզի չխանգարի իմ քննություններին:

Մի օր, Լոզան եղած ժամանակ, նա խնդրեց ինձ եւ ընկերուհուս մի առ ժամանակ սենյակից դուրս գալ, թողնել իրեն միայնակ եւ, եթե կարելի է, գտնել մի սիգարետ, որի կարիքը զգաց:

Մենք չհասկացանք. շատ տարօրինակ թվաց մեզ, եւ երբ նա սենյակից դուրս եկավ գոհ եւ հուզված՝ «մուսաս էր եկել,— ասաց,— շատ անգամ զիջերներն էլ է գալիս եւ այդ պատճառով մահճակալիս մոտ, աթոռի վրա, միշտ դնում եմ թուղթ

եւ մատիտ: Առավուտը շատ անգամ ոչինչ չեմ հասկանում գրածիցս, որովհետեւ մթության մեջ, կիսարթուն մի տողի վրա գրում եմ մի ուրիշը, եւ անհասկանալի է դառնում գրածս»:

Սիւմանթոն ոչինչ չասաց իր գրածի եւ առհասարակ չէր խոսում իր ստեղծագործությունների մասին:

Իմ հարցին՝ «շատ դժվար է քեզ հասկանալ եւ կան մարդիկ, որ քեզ լիովին չեն հասկանում, ինչպես եւ ես», Սիւմանթոն հպարտ եւ վստահ պատասխանեց. «Իմ բանաստեղծությունները անկողնու մեջ կարդալու չեն, պետք է խորը ըմբռնել, հասկանալ, ապրել»:

Ժնեւում Սիւմանթոնին հանդիպում է մի ամերիկահայ, եւ երբ ծանոթացնում են նրան բանաստեղծի հետ, որին մեծ փափագ ուներ տեսնելու, նա ասում է. «Ես աս Սիւմանթոնին չեմ ուզեր, ես ան մարգարե Սիւմանթոնին կուզեմ»: Նրա երեւակայության մեջ Սիւմանթոն պետք է մարգարեի տեսք ունենար եւ ոչ թե նիհար երիտասարդ մը ըլլար:

Եգիպտոսում նրատարակված մի թերթում, թե ամսագրում կար մի ոտանավոր՝ նվիրված տիկ. Զավենին եւ օր. Շաղեթյանին (1905 թ): Այդ բանաստեղծությունը ես գտնում եմ Սիւմանթոնի «Հոգեվարքի եւ հույսի քահերի» մեջ, «Արցունքները» վերնագրով, որը բավական փոփոխված է, մանավանդ վերջը: Սիւմանթոն սիրային թեմայով ոտանավորներ չէր գրում: Ինչպես ասել է Ավետիք Իսահակյանին՝ «Իմ գրիչը իրավունք չունի ազգային ողբերգությունից զատ ուրիշ թեմաներ երգելու»: Եվ իրոք, չերգեց...

Սիւմանթոն, Լոզանից ժնեւ տեղափոխվելով, ինձ չխանդարելու նպատակով (քննություններիս շրջանի էր) իրեն նվիրեց նամակագրության: Օրը 3 անգամ, ամեն փոստով վարդագույն թղթի վրա գրված նամակներ էր ճամփում ինձ: Հանկարծ դադարեց նամակագրությունը: Ես ենթադրեցի, որ նորեն հիվանդացել է եւ 1905 թ. 27. XI-ին շատ անհանգստացած մի նամակ ուղարկեցի ժնեւ (այդ նամակը Սիւմանթոնի ֆոնդումն է): Ինչպես գրում է Հ. Թամրազյանը, այդ ժամանակները սարսափելի էր Կովկասի քաղաքական դրությունը: Հայ-թրքական կոտորած, գործադուլներ, սպանություններ: Երկար ժամանակ տնից տեղեկություն չունեի. դադարել էր նամակագրությունը:

Հայրս բանկի միջոցով կարողանում էր դրած փոխադրել ինձ: Սարսափելի ջղային դրության մեջ էի: Այլեւս չէի կարողանում աշխատել, այն էլ դիակների վրա (բժշկական բաժնում էի): Դիակները ինձ հետապնդում էին, հիշեցնում Կովկասի կոտորածները: Խիստ տառապում էի. դրան ավելացավ Սիւմանթոնի լռությունը: Անհանգստությունս կրկնապատկվեց: Ես որոշել էի վերադառնալ Կովկաս, խորհրդակցելով Սիւմանթոնի հետ, երբ պատուհանիս տակ լսեցի «Մեր հայրենիք» սուլոցը: Դա Սիւմանթոն էր, որը իրեն կորցրած, ավելի դժգույն, քան կար միշտ, սարսափած ասաց՝ «Ինձ մեծ դժբախտություն է պատահել», բայց չկարողացավ ասել ինչ դժբախտություն: «Կգա՞ս ինձ հետ ժնեւ. եթե գաս այնտեղ, կիմանաս»:

Սիւսիւն գնացիմք ժնեւ, ուր սպասում էին նրա ընկերները՝ Սարգիս Մինասյանը եւ ուրիշները: Նրանցից միմիայն իմացա, որ Սիւմանթոնի հայրը ինքնաս-

պանություն է գործել: Ծանո ծանր հարված էր. «Սիամանթոն» խիստ մեծ ապրումներ ուներ. հիվանդացավ: Ընկերները անկողնուց չէին հեռանում: Այդ ծանր ռուպեներին անգամ մա շարունակ խնդրելիս է եղել ընկերներին, որ ուշադիր լինեն դեպի ինձ, աշխատեն, որ ես մասնակից չլինեմ իր մեծ վշտին: 1905 տարին վերջանալու վրա էր: Սկսվել էին տոնախմբությունները, ես կալադը-կարճավաղը: Սիամանթոն թույլ չէր տալիս, որ ես մի երեկո մնամ պանսիոնում: Նրա ընկերներից մեկը, կարծես Սարգիս Մինասյանը, ինձ ուղեկցում էր մոտակա մի կաֆե, որտեղ բոլորը դիմակավորված զվարճանում էին. դրանք թվում էր եւ Չարըզը: Լավ ընկեր է, չէ՞: Դա ինձ չէր ցրում. իմ միտքը հիվանդի հետ էր եւ հեռու Կովկաս: Այդ արվում էր Սիամանթոնի խնդիրը բավարարելու համար միմիայն:

Երբ Սիամանթոն սկսեց ավելի լավ զգալ, ես վերադարձա Լոզան. որոշ ժամանակից հետո եկավ եւ Սիամանթոն, ցանկանալով վերջին օրերը լինել Լոզան: Մենք արդեն միասին որոշեցինք, որ ես վերադառնամ Թիֆլիս՝ ծնողներս մոտ, հանգստանամ, կազդուրվեմ եւ ույժ հավաքած սեպտեմբերին վերադառնամ նորեն Լոզան՝ ուսումնա շարունակելու:

«Միայն թե այդ քո բժշկությունը թող. ի՞նչ գործ ունես մեռելներուն հետ, երբ ինքդ այնքան սիրում, հետաքրքրվում ու հասկանում ես գեղարվեստը», — պնդում էր Սիամանթոն:

Ծանապարհները վտանգված էին. միմյալ գնալ ոչ ոք խորհուրդ չէր տալիս: Սիամանթոն սարսափում էր ու խնդրում. «Մի քիչ էլ սպասիր, գուցե մարդ մը հայտնվի Կովկաս գնացող»:

Արդեն 1906 թ. փետրվարն էր. ոչ ոք չհայտնվեց:

Իրերս պահ տվեցի պահեստանոցում, երկու ճամպուրկ հավաքեցի հետս վերցնելու համար, երբ լուր եկավ, որ Մյունխենից մարդ կա Կովկաս գնացող: Սիամանթոն եւ մի ընկեր ինձ ճանապարհեցին կայարան: Սիամանթոն ինձ տվեց նկարչուհի օր. Դերձակյանի հասցեն, որը պետք է ինձ աջակցեր Մյունխենում: Սիամանթոն նստեց ինձ հետ շոգեկառք, ցանկանալով ուղեկցել մի կայարան եւ հրաժեշտի ժամանակ շատ հուզված ասաց. «Ժամանակը եւ տարածությունը ինձ կսարսափեցնեն...»:

Կարծես ինչ-որ նախազգաց...

Մյունխենում ինձ դիմավորեց օր. Դերձակյանը: Ոչ ոքի չհանդիպեցինք Կովկաս գնացող: Շիջեցինք խոշոր մուգեյները եւ ճանապարհվեցի Վիեննա (օր. Դերձակյանը իր օֆորտներից մեկը ինձ նվիրեց), ուր հեռագիր ստացա Սիամանթոնից. «Վիեննայում սպասիր: Վենետիկից գալիս է մի ուսանող, որի հետ կշարունակես ճանապարհող»:

Վիեննայում սպասեցի 6-7 օր:

Այցելեցի Մխիթարյաններին, շրջեցի քաղաքը, թանգարանները մինչեւ տեղ հասավ սպասածս ուսանողը: Վիեննայից մի ծանրոց ուղարկեցի Սիամանթոնին (նրա սիրած գրավյուրներից, փողկապներ եւ այլն) մի հրեա ուսանողի հետ, որը վերադառնում էր Շվեյցարիա իր հարսնացուի հետ, եւ որը այնքան ջենտլմեն գտնվեց, որ իրերը տիրոջը հանձնելու փոխարեն: յուրացրել էր: Դա առաջին անգամը չէր, որ օգտվում էին իմ՝ դեպի մարդը ունեցած վստահությունից: Վենետի-

կից եկած ուսանողը ինձ հայտնեց, որ իր հետ Կովկաս է տանում երկու զենք եւ փամփուշտներ. վստահ է, որ ես չեմ մերժի՝ մեկը ինձ վրա վերցնել սահմանը անցնելու ժամանակ:

Ես անհարմար գտա մերժելու, բայց միաժամանակ շատ անհանգստացա, մի քիչ էլ վախեցա:

Դեռ սահմանին չհասած մեր վագոնը մտան մի քանի մարդ, իբր աշխատում են սահմանագծի մոտ. դրանց հետ էր եւ մի շատ գեղեցիկ կին:

Ես ուղեկցիս շարունակ հայերեն նախազգուշացնում էի, որ շատ կասկածելի է շնչում (փամփուշտներն էին սեղմում), բայց ի՞նչ աներ խեղճը:

Ճամպուրուկները շարեցին երկար սեղանի վրա խուզարկելու համար: Սենք պայմանավորվեցինք սեղանի տարբեր ծայրերին դնել մեր իրերը, կարծելով այդպիսով փրկվել կասկածից:

Բայց մեզ արդեն մատնել էին մեր վագոնը մտած մարդիկ:

Սկսվեց խուզարկությունը. իմ իրերին ոչ ոք չմոտեցավ: Մեկ ժամից հետո վոլոչեսկից շարժվեց զնացքը. բոլորը ճանապարհվեցին, ես մնացի մենակ, իսկ ուղեկցիս տեղը դատարկ էր. նա չկար: Ինձ մոտեցան, խնդրեցին անցնել կանանց սենյակը, ուր ես տեսա այն գեղեցիկ կնոջը: Առաջարկեցին հանվել, եւ ես ստիպված էի մկրատ խնդրել. կտրեցի վրաս կախված զենքը եւ հանձնեցին:

Հետո իրերս տարան մի ուրիշ սենյակ, ուր հավաքվել էին 3-4 սպաներ, սկսեցին խիստ խուզարկել: Ինձ հարցրին. «Ի՞նչ սիստեմի է զենքս, ինչո՞ւ համար եմ տանում»: Բացատրեցի, որ գնում եմ Կովկաս, ուր մեծ խլրտումներ տեղի ունին, որ զենքը վերցրել եմ ինքնապաշտպանության համար: Իսկ ո՞ւր եմ ձեր փամփուշտները, ինչո՞վ պետք է պաշտպանվեիք»: Նրանք արդեն հասկացել էին, որ ես այն երիտասարդի զոհն եմ, որին արդեն ձերբակալել էին: Կոնֆիսկացիայի ենթարկեցին զենքը եւ վերցրին Սիամանթոյի բոլոր նամակները, որոնք որչա՞փ արժեք կներկայացնեին հիմա...

Գիշերը ժամը 12-ին վերջացրին խուզարկությունը: Պետք է ասել, որ շատ կորեկտ, լուրջ վերաբերմունք ցույց տվին սպաները: Կանչեցին մի հսկա, վախելու չափ հսկա մի ժանդարմ, հրամայեցին իրերս վերցնել եւ տանել հյուրանոց:

Ես սարսափած քայլում էի, ավելի շուտ վազում էի ժանդարմի հետեւից: Հյուրանոցում ինձ հատկացրին մի սենյակ, որի դուռը բանալի չուներ: Ճամպուրուկներս դրի դռան առաջ, մեկը մյուսի վրա, ինքս էլ նստեցի վրաները, որ եթե դուռը բացող լինի, ճամպուրուկները եւ ես վայր կըկնեինք, եւ հնարավորություն կունենամ օգնության դիմել:

Երիտասարդ էի, անփորձ, վախկոտ եւ ջղայնացած անհաջողություններից: Մյուս օրը հեռագրեցի հորս, ճանապարհվելով Թիֆլիս: Հայրս հեռագիրը ստանալուն պես Բաքու է շտապում ինձ դիմավորելու:

Բաքվից ճանապարհվեցինք ճեպընթաց զնացքով, որը կանգ էր առնում մի-միայն մեծ կայարաններում եւ շատ կարճ ժամանակ: Այդ կայարաններում հայրս ինձ նախազգուշացնում էր գլուխս իջեցնել, աննկատելի լինել, որովհետեւ կարող էին պատուհանից կրակել: Հասանք Թիֆլիս բոլորովին քայքայված, ջղային դրության մեջ:

Ահա Թիֆլիսից է, որ Սիամանթոյին գրում են մի թախծոտ, տագնապալի նամակ, նկարագրում Կովկասի քաղաքական լարված վիճակի մասին: Այդ նամակն, ինչպես գրում է Յ. Թամրազյանը, Սիամանթոյի ֆոնդումն է: Այդ իմ նամակին պատասխանում է Սիամանթոն. «Մի սարսափիր, այս տեղի կտրիժ տղաները պատրաստ են քեզ օգնության գալու. սպասում են քո կարգադրությանը»:

Սիամանթոն խնդր անհաճիցս, ջղային դրության մեջ, ուզում է ինձ հանգստացնել: Մեր նամակագրությունը շարունակվում էր: Մի նամակում Սիամանթոն գրում է. «Պոլսից ուղարկել են ինձ հորս մատանին. փափագում են այն ուղարկել քեզ»:

Խնդրեցի չմտածի այդ ուղղությամբ, մատանին թողնի իրեն, հիշատակ հորից: Իսկ ես սկսեցի պատրաստվել Սիամանթոյին մի ժանրոց ուղարկել, առանց մերոնց հայտնելու: Ոսկի ժամացույցս տվեցի վաճառելու եւ այդ գումարով մի լավ ժանրոց ուղարկեցի Կովկասյան բարիքներով:

Սիամանթոն խնդր անհաճիցս, ջղային դրության մեջ, ուզում է ինձ հանգստացնել: Մեր նամակագրությունը շարունակվում էր: Մի նամակում Սիամանթոն գրում է. «Պոլսից ուղարկել են ինձ հորս մատանին. փափագում են այն ուղարկել քեզ»:

Խնդրեցի չմտածի այդ ուղղությամբ, մատանին թողնի իրեն, հիշատակ հորից: Իսկ ես սկսեցի պատրաստվել Սիամանթոյին մի ժանրոց ուղարկել, առանց մերոնց հայտնելու: Ոսկի ժամացույցս տվեցի վաճառելու եւ այդ գումարով մի լավ ժանրոց ուղարկեցի Կովկասյան բարիքներով:

Ամառը գնացիք ընտանիքով Ղարաքիլիսա (այժմ՝ Կիրովական) ամառանոց: Կիրովականից քեռիս ինձ տարավ իրենց մոտ, հյուր Ղիլիջան: Այդ ժամանակամիջոցում Սիամանթոյի նամակները ընկել էին հորս ձեռքը: Հայրս շատ կուլտուրական մարդ էր, որին ես անչափ սիրում եմ պաշտում էի նրա հառաջադեմ հայացքների համար: Նույն զգացմունքները նա տածում էր դեպի ինձ: Հայրս հետաքրքրվելով Սիամանթոյի ով լինելով (ինչպես կաներ ամեն մի ծնող), նամակ է գրում ժնեւ Խաչատուր Մալումյանին եւ Լոզան օր. Սարումյանին, խնդրելով իրագել անեն իրեն այդ երիտասարդի մասին: Պատասխանը լինում է խիստ հուզիչ հորս համար: Ժնեւից գրում են, որ Սիամանթոն տաղանդավոր բանաստեղծ է: Ծանր հիվանդ էր, նույնիսկ մերժիմահ. հիմա քիչ ապաքինված է համարվում, բայց առողջական դրությունը դեռեւս հուսալի չի եւ այլն, եւ այլն...

Հասկանալով Սիամանթոյի զգացմունքները, մեր կապը, հայրս խիստ անհանգստացած եւ հուզված էր, նույնը՝ եւ մայրս: Մեծ, անսպասելի տրագեդիա էր մերոնց համար:

Հայրս շատ զուսպ էր. բառ անգամ չասաց ինձ: Իմանալով իմ բնավորությունը, նա սարսափում էր, որ ես հասկանալով անգամ վտանգը այդ մոտեցման, կործանարար ազդեցությունը հիվանդ երիտասարդի համար, ես անկասկած ընդառաջ կգնամ Սիամանթոյի աննկարագրելի ապրումներին, ինձ եւս կործանելով: Չուզեց վիրավորել իմ զգացմունքները:

Մայրս քնուշ մոտենում էր ինձ ասելով, որ այսինչն է առաջարկություն անում ինձ, այնինչ, եւ ես միշտ պատասխանում էի. «Մայրիկ քան, ես չեմ մտածում ամուսնանալ. ես սովորել եմ ուզում եւ հետո արդեն»:

Ես ծնողներիս անդրանիկ որդին լինելով, մեծ հույսեր, սպասումներ ունեին եւ հանկարծ ի՞նչ հիասթափություն... Սարսափելի դրություն էր ստեղծվել. խիստ ծանր ապրումներ ունեի: Չէի ուզում Սիամանթոն մասնակից լինի, նրան անհանգստացնել, վշտացնել:

Սեպտեմբերը մոտենում էր: Սիամանթոն անհամբեր սպասում էր ինձ: Իսկ մեր ընտանեկան տրագեդիան ավելի էր խորանում:

Նյութական հնարավորություն չունեի Լոզան վերադառնալու:

Խոսել ծնողներիս հետ այդ ուղղությամբ թույլ չէր տալիս հպարտությունս:

Որոշեցի ուսուցչական պաշտոնի անցնել, գրել այդ մասին Սիամանթոյին, հանգստացնել նրան եւ սպասել, թե ինչով կվերջանա այդ բոլորը: Հայրս ավելի անհանգստացավ իմանալով, որ ես Թավրիզ եմ գնում: Նա հավատացած էր, որ ես այնտեղ անպատճառ կհանդիպեմ Սիամանթոյին:

Իմ ճանապարհվելու օրերին հայրս քաղաքից հեռացել էր Դիլիջան, իբր բուժվելու: Նա չի ուզեցել ինձ վերավորել իմ ինքնուրույն քայլերիս համար:

Մեր տնեցիներից ոչ ոք ինձ չճանապարհեց կայաքան:

Ես գնացի ընկերոջս մոտ ընկերոջ հետ, որը Թավրիզից էր, գնում էր կնոջ մոտ: Մեզ հետ էին դպրոցի տեսուչը եւ ուսուցչական խումբը:

Ի՞նչ էր իմ դրությունը...

Սիամանթոյից հեռու, հարազատներիցս կտրված... Խիստ հուզված, ջղայնացած հասա Թավրիզ: Սիամանթոն խիստ հուսահատ, վշտացած նամակներ էր գրում ինձ Թավրիզ: Նա սարսափում էր մտածելով, որ հազիվ հաջողվի մեր հանդիպումը:

Սիամանթոն շատ ծանր ապրումներ է ունեցել, եւ Ավետիք Իսահակյանը մի քանի ամիս հովանավորել, հանգստացրել է նրան, միշտ հուսադրել: Ես ինքս հույսս կտրած, ընկճված աշխատում էի նրան հանգստացնել... Թավրիզում ես Սիամանթոյից ստացա նոր լույս տեսած «Հոգեվարքի եւ հույսի քահերը»: Մի օրինակ էլ ուղարկել էր մեր դպրոցին նվեր: Ես մեծ ցանկություն ունեի եւ հնարավորություն Սիամանթոյին նյութապես օգնել Թավրիզից, բայց իմ Թավրիզից ուղարկած ծանրոցը ստանալով նորից դժգոհել էր, խիստ վշտացել եւ վերավորվել: Չուզեցի ես ավելի ջղայնացնել, վերավորել նրա պատվասիրությունը իմ օգնությամբ:

Մեր նամակագրությունը շարունակվում էր մեկ տարի, անհույս:

Սիամանթոն հուզվելով, տանջվելով չուզեց այլեւս ինձ եւս հուզել: Նա սիրո, սպասման կարողոր սրտում լռեց հուսահատ...

Ահա այդպիսին էր այդ ազնիվ, հպարտ, զգայուն, նուրբ, մեղմ, փափկակակատ, հրաշալի մարդը, որին ես հանդիպեցի, ճանաչեցի, եւ որը անչափ դժբախտ վախճան ունեցավ...

Սիամանթոյի անձնական կյանքը, հոգեկան տանջանքները, հույզերն ու ապրումները ձախտող սիրուց, եւս շաղախված են վշտով ու թախսծով նրա պոեզիայում:

Ես շատ եւ շատ նամակներ եւ բացիկներ ունեի Սիամանթոյից, որոնք մի-մի գեղարվեստական պատկերներ էին, որոնք կարող էին արժանի տեղ գրավել, բայց, ցավոք սրտի, այժմ գոյություն չունեն:

Սիամանթոն չասաց իր վերջին խոսքը: Չասաց այդ մեծատաղանդ, բոցավառ, հայ ժողովրդի տառապանքի, մաքառման ու հույսի երգիչը:

Թող նրա «Ընտիր երկերը» նրա հիշատակը լինեն, նրա անարժան, սոսկալի վախճանի հիշատակը: «Ափ մը մոխիր... իմ սրտիս վրա ցանցելու» նրա սրտաբուխ ցանկությունն անգամ չիրականացավ... Սիամանթոյի խոր, մեծարժեք

ստեղծագործությունը արժեքավորվել, գնահատվել է եւ միշտ էլ կգնահատվի:
Ամեն մի հայ գլուխ է խոնարհում մեր մեծ բանաստեղծի անթառամ հիշատա-
կի առաջ... Սիամանթոն պարուն է եւ միշտ էլ կապրի...

Տարիներ անցան:

Եկավ 1913 թվի աշունը:

Եկավ Պոլսից եւ Սիամանթոն, որը ուղեկցել էր Սիմոն Զավարյանի դիակը
Թիֆլիս: Ինձ լուր են բերում, որ Սիամանթոն փափագում է ինձ հետ տեսնվել:

Այդ ցանկությունը ես հայտնում եմ ամուսնուս, որը ճանաչում էր դեռ Բեռնից,
ուսանողական կոնֆերենցիայից Սիամանթոնից եւ խոստանում է հրավիրել մեզ
մոտ: Ես ծանր պառկած հիվանդ եմ:

Այդ ժամանակները Սիամանթոն հանդիպում եւ ծանոթանում է փոքր քրոջս
հետ, որին հանդիպում է թատրոնում, Նվարդ Թումանյանի (Հովհաննես Թու-
մանյանի դստեր) հետ միասին:

«Հանկարծ տեսա՝ թատրոնը լուսավորվեց. տեսա Սաթենիկին, - բայց ինձ ա-
սացին, դա Սաթենիկի քույրն է: Խնդրեցի ծանոթացնել ինձ ձեզ հետ» պատմում
է Սիամանթոն քրոջս:

Դրանից հետո քույրս հաճախ հանդիպում է Թումանյանի մոտ կամ այլ տեղ
Սիամանթոնին:

Միշտ քրոջս ճանապարհում է տուն, երկար կանգնում մեր տան մուտքի մոտ,
բայց անհարժար է զգում մտնել մեզ մոտ, ինձ՝ հիվանդիս չանհանգստացնելու
նպատակով:

Սիամանթոն քրոջս հետ մոտենում է, պատմում իր սիրո մասին, նկարագրում
իր ապրումները եւ ասում. «Սաթենիկի ժպիտը, իմ սիրած ժպիտը, միշտ ինձ հետ
է, չնայած ես հիմա տարված եմ եւ սիրում եմ օր. Մաննիկին, պոլսահայ մի աղջե-
կա. ահա եւ նրա թաշկինակը, որ կրում եմ հետս»:

Վերջին հանդիպումից հետո քրոջս հետ, երբ Սիամանթոն պատրաստվում էր
Պոլիս վերադառնալ, նորից է հանդիպում քրոջս ասելով՝ «Սեւ ծովը խիստ ալե-
կոծված է. չուզեցի ճանապարհվել, որ ձեր ձկները տաղանդավոր չըլլան»: Սիա-
մանթոն Կովկասից մեկնում է Չվիցարիա բուժման նպատակով:

Ես շատ գոհ էի, որ Սիամանթոնի համար կյանքի եւ սիրո նոր շրջան է սկսվել:
Անչափ ուրախ էի, որ նա սիրելի ընկեր է գտել եւ վերջապես հանգիստ, անվեր-
դով կյանք կվայելի:

Դարձյալ Սիամանթոնի բաժին ընկավ կյանքի դաժան հարվածները, բա-
ժանման, կարոտի ցավերը...

Ի՞նչ դաժան է կյանքը. ի՞նչքան անարդար...

Դրատարակության պատրաստեց՝
ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ